

Սոսե Պողոսյան Բարդուղի

ԽՈՂԱԽՐԱՏԱԿԱՆ ՏԱՂԵՐԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Բանալի բառեր. աշուղ, աշուղական գրականություն, աշուղական տաղաչափական արվեստ, խոհախրատական տաղեր, կանոնական խրատ, կենցաղային խրատ, քրիստոնեական աշխարհընկալում, աստվածաշնչյան մոտիվներ, միջնադարյան գաղափարաբանության երկփեղկում, հոգի ու մարմին, հոգևոր և աշխարհիկ, զղջում, ապաշխարություն, մահվան վկայակոչում:

Մուտք

Միջնադարյան կանոնական գաղափարաբանության ասասանման առաջին նախադրյալները գլխավորապես կապված են քաղաքների զարգացման հետ: Այս երևույթն իր հերթին պարարտ հող էր ստեղծում նոր գաղափարների առաջին ծլարծակումների համար՝ հիմք դնելով վերածննդի գրականության սկզբնավորմանը: Սակայն հայ իրականության մեջ քաղաքական և տնտեսական ոչ նպաստավոր պայմանների հետևանքով դրա կայացումը տևեց մինչև ուշ միջնադար: Միջնադարյան կաղապարված մտայնությունը տիրական էր «պաշտոնական», «կանոնիկ» գրականության մեջ, սակայն չէր կարող կառավարել զարգացման այն գործընթացը, որ քաղաքներում էր ընթանում: Ժողովրդական, գուսանական, ապա նաև՝ աշուղական գրականությունը, որը սնվում էր աշխարհիկ կյանքից, չէր կարող այս կամ այն չափով չդառնալ նույն այդ կյանքի արտացոլումը, ինչը բերեց հոգևորի և աշխարհիկի՝ մինչ այդ բացառապես նույնականության խախտմանը, այլ կերպ ասած՝ միջնադարյան գաղափարաբանության երկփեղկմանը: «Վերածննդի շունչն ու աշխարհիկ ոգին համահակադրվեցին միջնադարյան աշխարհագրացողությանը, եւ, ըստ այդմ, ժամանակի քնարերգուների ներաշխարհում առաջացավ մի երկփեղկվածություն, որը գնալով ավելի սուր բնույթ կրեց՝ իր գեղարվեստական արտացոլումը գտնելով նաեւ միջնադարի վերջին խոշոր հայ քնարերգուի՝ Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ»¹:

Ժողովրդագուսանական արվեստն առհասարակ հնագույն ժամանակներից գոյություն է ունեցել Ատրպատականի և Հայաստանի տարածաշրջաններում: Այն համարվում է Իրանի և Հայաստանի մշակութային ընդհանրություններից մեկը: Թրքալեզու ազգերի բնակեցումից հետո գուսանական արվեստը հայտնվեց թուրքական լեզվի և մշակույթի ազդեցության տակ և հետզհետե փոխակերպվեց աշուղական արվեստի: Աշխարհագրորեն այն ընդգրկում է Ատրպատականի թրքալեզու շրջանները, Միջին և Փոքր արևելքը: «Պարսից գրականությունից մեկնությունների և արտահայտությունների առատությունը մեզ թույլ է տալիս այն համարել թուրքական ժողովրդական մշակույթի և պարսից բանաստեղծության խառնուրդ, և այս կենդանի արվեստը՝ տարածաշրջանի ազգերի մշակույթների կառուցողական փոխազդեցության արդյունք»² :

Հայ աշուղները հայերենից բացի տաղեր էին հորինում նաև թուրքերեն, պարսկերեն, վրացերեն լեզուներով, որպեսզի իրենց արվեստը ներկայացնեն այլ ժողովուրդներին: Իսկ նրանց կիրառած հայերենը հետաքրքիր խառնուրդ էր ինչպես Նոր Զուղայի, Չահարմահալի, Փերիայի, Թիֆլիսի, Իստամբուլի տեղի բարբառների, այնպես էլ թուրքերեն, պարսկերեն, վրացերեն լեզուների³: Աշուղը ընտրում էր տվյալ տարածաշրջանին հարազատ լեզու, որպեսզի իր մտքերն ու խրատները հասկանալի լինեին ժողովրդին: Միայն շատ հազվադեպ՝ կրոնական թեմաներով որոշ տաղերում, նա օգտա-

1 Բախչինյան Հ., Սայաթ-Նովայի միջնադարյան աշուղ-բանաստեղծ է, «Ազգ» օրաթերթ, թիվ 40, (30.10.2015): <https://www.azg.am/AM/culture/2015103007>

2 Մաթյան Ա., Սպահանի հայ աշուղների գրականությունը, «Պայման» հանդես, թիվ 40, 2007:

3 آزاد ماتيان، «ادبيات عاشق های ارمنی اصفهان فصلنامه فرهنگی پیمان»، شماره 40، سال دهم، تابستان 1386 .
<http://www.paymanonline.com/magazine.aspx?id=CFC1AB21-D571-4EC3-9379-ED0012AFF860>

3 Տե՛ս նույն տեղում:

գործում էր գրաբարը, եթե, իհարկե, գրագետ էր: Մանուկ Աբեղյանը, խոսելով 17-19-րդ դդ. բանաստեղծների՝ նույն աշուղների մասին, գրում է. «Այդ երկու հարյուրից ավելի տարիների ընթացքում եկեղեցականների և եկեղեցական նյութի մեջ բանաստեղծություն չկա, բայց բուն ժողովրդի մեջ եղել է, անշուշտ, բանաստեղծություն, և ավելի՝ ժողովրդական երգիչների մեջ, որոնք մեծ մասամբ աշխարհաբարով են երգել, իրենց տեղական բարբառով՝ շատ քիչ տեղեկություն ունենալով Ս. Գրքից և գրաբար լեզվից»¹:

Հայ աշուղական գրականության սկզբնավորման հարցում գրեթե համակարծիք են հայ գրականագետները և դրա բնօրրանը համարում են Նոր Զուղան՝ նրա ծագումնաբանության աղբյուրը փնտրելով հայրենիքից դուրս: Այստեղ 1604-1606 թվականներին բնակեցվելուց հետո վերապրող ժողովրդի բնականոն կյանքի արդյունքում պարսկական և թուրքական համարվող այս արվեստը հայկականի փոխակերպողները՝ հայ գուսանական մշակույթի արևելյան մշակողները, Նոր Զուղայում, Չահարմահալ, Փերիա և այլ գավառներում դեռևս չձևավորված և չկազմավորված Նոր Զուղայի պատմության ամենավաղ շրջանում այս համայնքի նորընծյուղ քաղաքակրթության փոքրիկ ու ցիրուցան հիմնաքարերն էին դնում: Նրանց ստեղծած արվեստը հետագայում պիտի տարածվեր Վրաստանի, Միջին Արևելքի, Օսմանյան Թուրքիայի հայաբնակ վայրերում, ապա նաև՝ Հայաստանում, և դառնար հայ գրականության մի կարևոր շրջափուլ:

Այս տեսությունը ձևավորվել է տվյալ շրջանի Նոր Զուղայեցի աշուղների ստեղծագործությունների հիման վրա, մինչդեռ «ամենայն հավանականությամբ նրանցից առաջ ևս բանավոր կերպով տարածված է եղել Կովկասի հայերի մեջ, որտեղից էլ բերվել է Նոր Զուղա»²:

Պարսկաստանի հայ աշուղները, հետևելով աշուղական տաղաչափական արվեստի օրինաչափությանը, օգտագործում էին բանաստեղծական նույն տեսակները, ինչպիսիք են բայաթին, դուշման, մուխամասը, մուստազատը, դաստանը, գագելը և այլն: (Սրանց՝ որպես տաղաչափական «կոկ ու մշակված ձևերի» ուսումնասիրության կարևոր նշանության մասին ակնարկ է կատարել Ավ. Իսահայանը իր հուշերում³): Նորջուղայեցի հայ աշուղները «հինգ, ութ, տասը, տասնմեկ վանկանի չափերով, քառատող, հնգատող և այլ տներով տաղեր էին հորինում, իսկ տների քանակը կախված էր տաղի բովանդակությունից. լիրիկական, սիրային թեմաներով տաղերը ավելի կարճ, իսկ պատմական, կրոնական տաղերը ծավալուն էին: Նրանցից մեզ հասած տաղերի մեծ մասը գրված են քառատող տներով, առաջինում՝ abab, հաջորդ տներում cccb, dddb հանգավորմամբ»⁴:

Աշուղի կերպարը, իր բազմակողմանի բնույթով հանդերձ, որոշակիորեն դուրս է գալիս արվեստագիտական ընկալման սահմաններից: Նրա դարավոր լինելությունը պատմության մեջ, կատարած դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, իմաստնության, պայծառատեսության, բժշկումների ու բազում այլ գերմարդկային շնորհների մասին հյուսված գրույցները դարերի ընթացքում կերտել են աշուղի ոչ սովորական, ծիսաառասպելական կերպարը, որը ձևավորվել է մի շարք հանգամանքների արդյունքում: Սրան մի կողմից նպաստել է նրա համաժողովրդական ընդունվածությունը. «Ընդունելի էր բոլոր տարիքային խմբերի համար՝ մանուկից մինչև իմաստունը: Ու թվում է, թե աշուղի կերպարն անցնում է բոլորի միջով՝ աղքատից թագավոր, կնոջից տղամարդ, մեռյալներից ապրողներն ու անմահները: Աշուղի կերպարի նման դիտանկյունը չէ՞ արդյոք պատճառը, որ հաճախ այս աշխարհի ամենահզորները, որեւէ փաստ ճշտելու նպատակով, կերպարանափոխվում, դառնում են աշուղ՝ «վերից» «վար» տեղափոխվելով, որպեսզի իրագործեն իրենց հեռագնա ցանկությունը»⁵: Մյուս կողմից՝ մեծ ազդեցություն է թողել աշուղ դառնալու բավականին բարդ ու խորհրդավոր գործըն-

1 Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. ք, Բեյրութ, 1959, էջ 7:

2 Մաթյան Ա., տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս Իսահայան Ա., Հուշեր, Ե., 1975, էջ 290:

4 Մաթյան Ա., տե՛ս նույն տեղում:

5 Պիկիչյան Հ., Աշուղը՝ երաժիշտ, բանաստեղծ եւ ծիսաառասպելական հերոս, «Արտերիա» ամսագիր, հրատարակված է 13.05.2012, <http://www.arteria.am/hy/1336924498>

թացը: 10-12 տարեկան պատանին, քաղաքային վարպետ աշուղի սազը ձեռքին, նրան աշակերտելով, քաղաքից քաղաք է թափառում՝ սերտելու նրա երգ ու նվագը և սովորելու «երգ կապելու» արվեստը: Ապա ևս երեք տարի նրան կցում են քաղաքում կամ գյուղում թափառող աշուղների խմբին՝ մասնագիտական և կյանքի փորձ ձեռք բերելու նպատակով: Չորս-հինգ տարի վարպետին ծառայելուց հետո միայն, վերջինիս համաձայնությամբ, դիմում է «ուստաբաշուն»՝ խնդրելով իրեն քննության ենթարկել: Հավաքվում են քաղաքի վարպետ աշուղները՝ նախագահի կամ ուստաբաշու գլխավորությամբ և քննում նրա՝ աշուղական արվեստի իմացությունը: Եվ միայն վարպետների կողմից հավանություն գտնելուց հետո «ուստաբաշին կանչում էր նրան իր մոտ, երեսին մի ուժեղ ապտակ հասցնում՝ առաջին անգամ նրան կոչելով վարպետ:»¹ Այնուհետև դառնում է միության անդամ և ստանում քննությանը ներկա վարպետների ստորագրությունը կրող վկայական²:

Նրա՝ գերմարդկային ու իմաստուն, հասարակության պատկառելի առաջնորդի կերպարը չէր կարող այսքան հզոր լինել, եթե այն հիմնված չլիներ կրոնի և հավատքի վրա: Հայերը սրբազան պաշտոն էին համարում աշուղությունը՝ այն կապելով Սուրբ Կարապետի զորության հետ. այսպիսով՝ աշուղությունը սոսկ արվեստի դրսևորում չէր, այլև՝ Սուրբ Կարապետի կողմից հրաշքով տրված շնորհ: «Գիշերը Սբ. Կարապետի վանքում կամ գերեզմանաքարին թողնված հրաշքով լարվող նվագարանների հետ միասին, առավոտյան շնորհ են ստանում նաեւ քնած երաժիշտները, որոնք միանգամից դառնում են վիրտուոզ կատարողներ՝ նվագելով վերափոխված նվագարանները, կամ երաժշտապոետիկ շնորհ ստանալով՝ սկսում են հանպատրաստից ստեղծագործել»³:

Օգտվելով իրենց համաժողովրդական կերպարից՝ Նոր Ջուղայի աշուղները ևս թափանցում էին ժողովրդի բոլոր շերտերը՝ քարոզելով կրոնական, ընտանեկան, հասարակական, համամարդկային աժրեքներ՝ դրանով իսկ դառնալով Նոր Ջուղայի հիմնադրվող քաղաքակրթության առաջին ուսուցիչները:

Այս պատկառելի արվեստի ներկայացուցիչները, սակայն, համեստության և խոնարհության իրենց առաջին դասն էին տալիս՝ իրենց ժողովրդի ծառան կոչելով: Այսպես՝ պարսկահայ մի շարք աշուղներ որպես գրական մականուն սեփական անվանը կցում էին «ղուլ», նույն է՝ «ղուլամ», այսինքն՝ «ծառա» մակդիրը: Աշուղ կոչվելուց և Սուրբ Կարապետ ուխտագնացությունից հետո նրանք նվիրվում էին սեփական ժողովրդին՝ ծառայելով նրա բարեկրթությանը:

1. Խրատի կանոնական շերտեր

Ինչպես հայտնի է, աշուղական երգերը ժողովրդական երգերի պես սկզբնական շրջանում քնարական-ներանձնական ստեղծագործություններ էին, թեև սրանցում միշտ էլ գերակշռում էին էպիկական, խոհախրատական տարրերը: Հետագայում աշուղական երգերը առավել հասարակական բովանդակություն են ստանում: «18-19-րդ դարերի և նույնիսկ նախորդ շրջանների աշուղական գրականության նպատակներից մեկն է խրատը: Այս պատճառով աշուղական բանաստեղծությունների մեջ միշտ էլ զգալի տեղ են գրավել դիդակտիկական-խրատական ստեղծագործությունները»⁴:

Նոր Ջուղայի աշուղների տաղերում նույնպես մեծ տեղ են գրավում ուսուցողական բնույթի խրատական տաղերը: Այս երևույթը միայն միջնադարյան խրատական երգերի նմանակման արդյունք չէ, և այն կարելի է կապել պատմական, հասարակական մի շարք հանգամանքների հետ: Պատերազմից, բռնագաղթից, սովից ու մահից փրկված ժողովուրդը թրթափել էր իր հավատի ու արժեքների պաշարը, և անորոշության մեջ էր նրա ապագայի տեսլականը: Անհրաժեշտ էր վերանայել մարդկային, կրոնական ու ազ-

1 Լևոնյան Գ., Աշուղները և նրանց արվեստը, Ե., 1944, էջ 23:

2 Այս մասին մանրամասն տե՛ս նույն տեղում:

3 Պիկիջյան Հ., տե՛ս նույն տեղում:

4 Հայ աշուղներ. 17-18 դդ., Ե., 1961, էջ 11:

գային բարոյախրատական ավանդները և մշակել նորերը՝ օտարության, օտար կրոնի ու մշակույթի տեր ժողովրդի մեջ պահպանելու սեփական նկարագիրը:

Նոր կազմավորվող համայնքում այդ դժվարին խնդիրը իրենց ուսերի վրա վերցրին նաև աշուղները, որոնք լավ էին գիտակցում իրենց առաքելությունը, ինչպես նաև «գրչի»՝ իրենց իսկ խոսքի ուժը.

Գրիչն գովեմ մին դամիշ ա,
Պտուղն պատուական եմիշ ա,
Ջեռնունդ պախիր համիշայ,
Ոսկով բռնած մօհրի նման¹:
(«Գրիչ»)

Գրագիտության տարբեր աստիճաններ ունեցող այդ ժողովրդագուսանական երգիչները, ստանձնելով յուրօրինակ հասարակական «գործչի» իրենց դերը, հասարակ խաղասացից վերածվեցին բարոյախրատական դասեր տվող ուսուցիչների՝ առաջնորդելով 17-րդ դ. սկիզբ առած զարթոնքի ժողովրդական-բանահյուսական շերտը: Այս ամենը առավելապես իրականացվում էր խոհախրատական բնույթի տաղերի միջոցով, որոնց հեղինակ աշուղները իրենց պատգամները հասարակությանն էին հղում աշուղական երգի ամբիոնից՝ մեջլիսից:

Մանուկ Աբեղյանը նկատել է, որ խրատական քերթվածները հիմնականում մնում են կրոնական պատկերացումների շրջանակներում և «տոգորված են քրիստոնեական բարոյական գաղափարներով, զբաղվում են կրոնական ուղղության խրատներով»²:

Խոհախրատական տաղերի հիմքում ուղղակի և անուղղակի կերպով ընկած է այդ ուսուցողական նպատակը, որը դրսևորվում է կրոնական որոշակի շերտերով, Աստվածաշնչից արված մեկնություններով և խրատադաստիարակչական առակների հիմքում ընկած պատկերներով: Այս երևույթը գալիս է շարականներից և միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության առաջաջացման ամենավաղ շրջանում շարունակվում է շերտավորված դրսևորումներ ունենալ:

Նոր Ջուղայի աշուղները նույնպես հետևում են այս օրինաչափությանը: Նորջուղայեցի Հարթուն Օղլին, օրինակ, թողել է 127 տնից բաղկացած մի ոտանավոր, որը կրում է «Տաղ արարչագործության աշխարհի կամ համառոտ պատմություն Աստվածաշունչ սուրբ գրոց» վերնագիրը, որով նա տալիս է Աստվածաշնչի համառոտ պատմությունը՝ սկսելով աշխարհի արարումից: Ըստ Արամ Երեմյանի՝ սա վկայում է այն մասին, որ «Հարթուն Օղլին տեղյակ է եղել նաև Ս. Գրքին, որից նա նյութեր է վերցնում և երգեր հյուսում»³:

Այսպիսի սխեմատիկ հաջորդականություն ունեցող տաղեր, սակայն, շատ քիչ են պատահում Նոր Ջուղայի աշուղների ստեղծագործություններում: Այս աշուղները հիմնականում կենդանի կերպով վերարտադրում են ժամանակի երևույթները՝ մերթ ուղղակի, որպես կանոն մեջբերելով աստվածաշնչյան մոտիվներ ու պերսոնաժներ, մերթ քննության ենթարկելով ու վիճելով դրանց հետ՝ այսպիսով սահմանելով մարդաստված հարաբերությունները:

«Քրիստոնեական միջնադարի կյանքի ու մշակույթի հիմքում ընկած են քրիստոնեական աշխարհընկալումն ու աշխարհագագացողությունը, բարոյական նորմերն ու սոցիալական հոգեբանությունը»⁴, -գրում է Հենրիկ Բախչինյանը: Այս ավանդներն է ժառանգել նաև աշուղական գրականությունը:

Որպես քրիստոնյա՝ աշուղները, իրենց մեջ ունենալով միջնադարյան աստվածապաշտության ու կրոնական հավատի մի հսկայական պաշար, առաջին հերթին դիմում էին աղոթքի լեզվին: Ահա հենց աղոթքի գործածությունն էլ աշուղական երգերում դառ-

1 Նույն տեղում, էջ 85: Ջուղայեցի աշուղներից այսուհետ արված բոլոր մեջբերումները նույն գրքից են, ուստի՝ կնշենք միայն էջերը:

2 Աբեղյան Մ., Երկեր, հ. դ, Ե., 1970, էջ 343:

3 Երեմյան Ա., Աշուղ Հարթուն Օղլի, Նոր Ջուղա, Տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի, 1920, էջ 10:

4 Բախչինյան Հ., տե՛ս նույն տեղում:

նում է մարդ-աստված հարաբերության առաջին ու թերևս ամենաանմիջական դրսևորման ձևը:

Լոյս Քրիստոս, քեզ ունեն յոյս, և դու ողորմաս ինձի, Տե՛ր.
Չար անիրաւ մեղուցելուս, դո՛ւ թողութիւն տաս ինձի, Տե՛ր:
Թողութիւն տաս իմ մեղացն, զղջում արտասուս և լացն.
Շնորհես անմահութեան հացն. դու տաս քո սուրբ մասն ինձի. Տե՛ր¹:
(«Վասն մեղաց պաղատանք»)

Աղոթքով դիմելով Աստուծո՛ւ աշուղ հեղինակը հայտնվում է հոգու ու մարմնի պայքարի, այսպես ասած, թատերաբեմում և շարունակում է հյուսել մարմնականի ժխտման, հոգու վեհացման ու մաքրման՝ միջնադարյան բանաստեղծների կողմից կիրառվող գիծը:

Մեղքս շատացել ա, մտքովս չար եմ,
Քեզ ամ ապավինել Աստվածածին կոյս,
Դարձ ու զղջում չունիմ, հոգւով տկար եմ,
Ինձի չար ճանապարհէն հանիր, տա՛ր ի դուս:

Աբդին Օղլի Հայրապետ, «Մեղքս բազմացել ա, մտքովս չար եմ», էջ 155

Իր ու Աստծո միջև կապ հաստատելուց հետո նա քննում է իր ժամանակի մարդու խնդիրները և թվարկում նրա մեղքերը, որոնք, շղթայվելով իրար, ամբողջացնում են մեղավոր մարդու կերպարը:

Աչքովս մեղայ՝ ինչ որ տեսի ցանկացա,
Աշխարհս տվին ինձ՝ դեռ չկշտացայ...
Ձեռքովս մեղայ՝ զըրկել, քաշել ամ բերել,
Մարմինս կրակ եմ շինել, խեղճ հոգիս էրել...

Համայն մարմնովս մեղքում կորել աւ,
Աշխարհիս չար բանէրն ողջ սովորել աւ,
Քրիստոնէի, կարգից՝ ես մոլորվել աւ,
Մեղայ, Տե՛ր, փոշման ամ ես իմ մեղացէն:

«Մեղայ Տէր», Ղուլ Արզունի, էջ 88-90

Մեղքերի հորձանուտում կործանվող մարդիկ, սակայն, չեն գիտակցում այս ամենը, անհաղորդ են զղջմանը, ապաշխարությանը և անմասն՝ ներման և փրկության աստվածային շնորհից: Սրա համար էլ խորապես ցավում է աշուղը.

Մտածում չեն հոգի տալն,
Դժոխսկի դառն տանջալն.

Ղուլ Արզունի, «Մեր ասկն յիմարացել ան», էջ 92

Չունեն զղջմունք, ատասունք ու լաց,
Չեն տուել աղքանտին և ո՛չ մի ճոթ խաց.
Մարմինս պայծառ ամ պահել, խեղճ հոգիս զրկած...

Մեղայ չեն տուել, որ առնեն թողութիւն,
Վայ ինձ, ես դո՞ր կտեսնեն արքայութիւն....

Խոնարհ չեն կացել Աստծու հրամանին,
Մշտապէս գնացել հետ մեղաց բանին...

Ղուլ Էգազ, «Մեղաց», էջ 83

Նամանօրինակ մերժելի երևոյթների բացահայտումը աշուղական խրատական տաղերում սկիզբ է դնում, այսպես ասած, «մեղա»-ի մոտիվի կիրառմանը: Մեղայական զղջումների այս շարունակական ընթացքն էլ հեղինակ-աշուղին ուղղորդում է ինքնամաքրման և ապաշխարության ճանապարհով: Իսկ վերջինիս հասնելու համար նա համոզված է, որ պետք է մարդկությանն առհասարակ մաքրել մեղքերից: Ահավասիկ աշուղի

1 Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 30-31:

մեջ արթնացնում է նարեկացիական «Ես ամենայնն և յիս ամենեցունն» սկզբունքին համարժեք մի գիտակցում, որի հետևանքով բոլորի մեղքերն իր վրա զգալով՝ նա գրում է.

Իմ մեղքն բռնած ա աշխարհս բոլոր,
Մեղայ Տէ՛ր, փոշման ամ ես իմ մեղացէն:
Ղուլ Արգունի, «Մեղայ Տէր», էջ 89 ՀՄ

Մեղքս շատացել ա քան զգետ ու ծով,
Մեղաց ծով ամ դարձել ոտով ու ճղկով,
Մեղուցեալ եմ ես ձեռքով ու ոտքով,
Մեղայ Քեզ, Տէ՛ր Աստուած, մեղաւոր եմ ես:
Ղուլ Էգազ, «Մեղաց», էջ 83

Խրատական կանոնական համարվող տաղերում աշուղը խրատի տեսքով ուսուցանում է աստվածաշնչային դասերը, պատկերում հոգու և մարմնի, հոգևորի և աշխարհիկի հակադրությունը և հորդորում հրաժարվել վաղանցիկ նյութականից ու աշխարհիկից՝ խրախուսելով մարդուն ընթանալ բարիք գործելու և աստվածային էությանը մոտենալու ճանապարհով:

Նաքէս մարդն ա մալին գերի,
Իրայ գործն իրան կերի...
Ղուլ Հովհաննես, «Նաքէս մարդը», էջ 204

Ադամայ որդի՛, քեզ մին խրատ տամ,
Ականջ արա. լուս աչկդ մի պահել կուր.

Տուր բաժին աղքատաց Ասծոյ ճամբին կաց,
Գնա դու եկեղեցի, զղջա՛, քէ մէկն լաց.
Ամենայն ժամ դու քո աղօթքունն կաց,
Համիշայ սիրող իստակ պահի, քո մեղքն լաց:

Ղուլ Հովհաննես, «Ադամայ որդի, քեզ մին խրատ տամ» էջ 175

Այսպիսով՝ մեղքի գիտակցումից, զղջումից ու ապաշխարումից հետո նյութականից հրաժարումը դառնում է կանոնական խրատի գլխավոր դրույթներից մեկը:

Այս դարերի աշուղական գրականության մի առաձին շարք են կազմում այլաբանական բանաստեղծությունները, որոնք գրվում են վիճաբանությունների ձևով: Խրատական տաղերում այլաբանական այս դրսևորումները սովորաբար հանդես են գալիս մարմնի և հոգու խորհրդանշական վեճով: Նոր Զուղայի աշուղների գործերում առանձնահատուկ ուշադրության են արժանի Ղուլ Հովհաննեսի «Հոգի ու մարմին» և Հարթուն Օղլու «Հոգի և մարմին» համանուն փիլիսոփայական տաղերը, որոնք աշխարհիկ և հոգևոր երկու բևեռների հակասությունն են պատկերում:

Հոգին մարմնոյն ասաւ. Թէ գաս իմ խտուր,
Բռնենք Աստծոյ ճանապարհն, լաւ կելնի.
Ձեռ վեր առ, աշխարհի մեղաց թարգը տուր,
Գնանք աղօթք անենք սարն, լաւ կելնի:

Մարմինն հոգուն ասաւ. լաւ կելնի,
Ձես խբար ի՞նչ քաղցր ա աշխարհիս մալն.
Ման գամ, գտնեմ իմ ուզեցած գօզալն,
Առնեմ գեղեցիկ կին, եարն լաւ կելնի:

Ղուլ Հովհաննես, «Հոգի ու մարմին», էջ 183

Կամ՝
Հոգին և մարմինն՝ եկին բաս արին.
Մարմինն ասաց, դու ուզում ես իմ վատն,
Ես իմ քեամալն ունեմ, մի՛ տալ խրատն,
Ունենամ բիրտցբիր դօվլաթ ու զադն՝
Ժողովեմ աշխարիս մալն լաւ կլնի:

Հոգին ասաց, թէ դու ասում ես դորդն,
Մտքիցդ մի՛ գցիր էն սուրբ Երրորդն,
Տու՛ր աղքատաց զաղիդ քո տասներդն,
Կենացէն փայ ունենալն լաւ կլնի:

Հարթուն Օղլի, «Հոգի և մարմին», էջ 251

Այսօրինակ այլաբանական պատկերներով են գրված նաև Դուլ Հովհաննեսի «Երկինք ու գետինք» և Հարթուն Օղլու համանուն «Երկինք և գետինք» տաղերը: Հատկանշական է, որ այլաբանական այս վիճաբանությունն ընթանում է հավասար պայմաններում, երկուսն էլ հավասարազոր կերպով գոյաբանում են մարդու մեջ ու շարունակվում ողջ երկրային կյանքի ընթացքում: Եվ աշուղը այսպիսով հանգում է միջնադարյան տաղասացների կողմից կիրառվող հաջորդ կարևոր դրույթին, այն է՝ աշխարհի բանը քննելու արդյունքում ի վերջո կյանքի անցողիկության գաղափարի վերահաստատմանը:

Դուլ Յովհաննէս ի՞նչ կտանես աշխարհից
Դէյրիզ հոգու, մարմնու դառն գէրդարից.
Մին օր կբաժանուեն, կլնեն, իրարից,
Վերջանայ, մեր մեղաց դատն, լաւ կելնի:

Դուլ Հովհաննես, «Հոգի ու մարմին», էջ 185

Հոգևորի և աշխարհիկի սահմանին որպես սթափեցնող ճշմարտություն աշուղը վկայակոչում է մահը, որը նույնպես միջնադարյան հոգևոր տաղերգության գլխավոր սկզբունքներից է:

Ունայն ա մալն, փուչ ա մեր կեանքն,
Ճշմարիտ ա այն, որ կայ վախճանքն.

Դուլ Հովհաննես, «Հոգևոր ճանապարհն յիստակիր», էջ 176

Կամ՝

Յորժամ եկի ի գերեզման,
Հինգ զազ կտավ ունիմ պատան.
Գիրս կարդէք ամենեքյան,
Միտ ածեք ձեր օրն մահվան¹: (Ամի Օղլի)

2. Կենցաղային խրատներ

Մահվան վկայակոչումը թերևս այն շրջադարձային կետն է, որ մարդուն ու հասարակությանը խրատող աշուղին հոգևոր հարցերի քննությունից տեղափոխում է ավելի առարկայական ու կենցաղային հարթություն: Ու որպեսզի նրա խրատը տեղ հասնի, որպեսզի մահվան վկայակոչումը իսկապես դառնա զգաստացնող, աշուղները սկսում են խոսել խոնարհության, արդարամտության, աղքատին ունեցածից բաժին հանելու, ճիշտ խոսելու, ճշմարտության հետևից գնալու, լավ ու իմաստուն մարդկանց հետ ընկերանալու, ընկերոջն ու բարեկամին նվիրվելու և նմանօրինակ հասարակ, մարդկային խրատներից:

Խրատ մի քեզ տամ, սիրելի եղբայր,
Դոր որ գնաս՝ խելքդ պախիր դու.
Նամարդի հետ չնստես մէջլիս և սօհբաթ,
Հախիրն մին օր բէդնամ կառի, փախիր դու:

Վատ մարդն քեզ հետ մի գցել ինատ,
Որ նա չի ճանաչում օրէնք ու հաւատ....

Դուլ Արզունի, «Խրատ», էջ 91

Մարդս պէտք ա խոնարհ կենայ,
Եթէ ֆահմ ու հուշ ունենայ...

Հրթուն Օղլի «Մարդս պէտք ա խոնարհ կենայ», էջ 242

1 Քառատողը հատված է Ամիր Օղլու գերեզմանաքարին փորագրված նրա մի ոտանավորից:

Ճանապարհդ պահիր մաքուր,
Այլոց վերայ մի՛ ասել զուր...

Ղուլ Հովհաննես, «Արի՛, այ փուչ Ադամայ որդի», էջ 178

Ինչպես նկատել է Հասմիկ Սահակյանը, Նոր Ջուղայի աշուղները «բոլորն էլ հատուկ կերպով շեշտում են աղքատներին օգնելու, ընկերասեր, մարդասեր լինելու անհրաժեշտությունը՝ այդ հարցում երբեմն հասնելով հայացքների գարմանալի լայնության՝ վեր կանգնելով կրոնական ու ազգային նախապաշարմունքներից»¹:

Սիրտդ իստակ պահի, ընկերոջ համար ջան տուր, հոգի տուր,
Թէկուզ հայ ըլնի, թէկուզ թուրք, քո կյանքը մատաղ տուր:

Ղուլ Յովհաննէս, ոչ մէկին մի՛ ասա թթու, ջան ասա, ջան տուր,
Համիշա սիրէ բոլորին, ջան ասա, քո կյանքը սատաղ տուր:

Ղուլ Հովհաննես, «Ադամայ որդի, քեզ մին խրատ տամ», էջ 175

Վազգեն Սաֆարյանը, խոսելով կրոնական թեմաների կիրառման եղանակների մասին աշուղական տաղերում առհասարակ, նկատում է. «Խրատը, ըստ էության, քողագերծվում է կրոնական կաղապարներից, դառնում անգամ կենցաղորեն որոշակի, և խոհական ընդհանրացումը այս կոնկրետության շարունակությունն է»²: Կրոնական թեմաների քողագերծման շոշափելի օրինակներ հանդիպում են նաև Նոր Ջուղայի աշուղների խոհական տաղերում.

Հոգւոյդ ճանապարհն յիստակիր,
Աղօթք արա՛ տեսնես լոյս.
Կեանք ունես, տու՛ր աղքատաց,
Մին օր կելնի ձեռնէդ դուս:

Ղուլ Հովհաննես, «Հոգւոյդ ճանապարհն յիստակիր», էջ 176

Կուր մի՛ պահել քեզի աղքատի դիմաց,
Քո ապրանքէն նրան էլ բաժին տուր:

«Ադամայ որդի, քեզ մին խրատ տամ», էջ 175

Այլ կերպ ասած՝ աշուղական հոգևոր հիմքով խոհախրատական տաղերը դառնում են կենցաղային-հասարակական բնույթի: Իսկ խրատն ինքը դառնում է կենցաղային անհրաժեշտություն, աշխարհիկ «մալին» գերադասվող հարստություն.

Էնտեղ նստիր, որ տան քեզ խրատ,
Ոսկէ գինտ շինիր, ականճէտ կախիր դու:

Ղուլ Արզունի, «Խրատ», էջ 91

Այս պարզ ասելիքի մեջ էլ նորջուղայեցի աշուղը վերաարժևորում է «բանը»: Մարդը պիտի իմանա խոսքի արժեքը, գիտակցի ճշմարիտ խոսքի գորությունը. «Քաղցրիկ բանայ ուր բերանն, իմանայ էն խօսկի քեանն...» (Հարթուն Օղլի «Վասն քաղաքավա-րու-թեան», էջ 240):

Այս համատեքստում մարդը սկսում է գնահատվել իմաստնությամբ ու մարդկային, բարոյական արժանիքներով. առաջ են գալիս մարդու գնահատման որոշակի չափանիշներ:

Մէկ քդագի գինը պետք ա
Հազար ոսկի թյուման ըլնէր,
Որ ամէն մարդ չառնէր, տնէր,
Թէ մարդու չնման ըլնէր:

Աբդին Օղլի, «Մէկ քդագի գինը պետք ա», էջ 159

Սակայն ամենակենցաղային ու համամարդկային թեմաներում անգամ նորջուղայեցի աշուղը շարունակում է մնալ ազգային տիրույթում՝ հորինելով ազգային խրատական տաղեր: Այսպես, օրինակ՝ Ղուլ Արզունիի խրատական տաղերում նրա ամենից

1 Հայ աշուղներ. 17-18 դդ, Ե., 1961, էջ 35:

2 Սաֆարյան Վ., Միջնադարի հայ գրականության պարբերացման հիմունքները, Ե., 2012, էջ, 216:

անկեղծ վախերը, նրա ամենամեծ ցավերը կապված են սեփական ժողովրդի աղավաղված բարոյական նկարագրի հետ.

Մեր ասկն յիմարացել ան,
Շուտով փչանալ ան ուզում.
Ուրախություն, սէր թողել ան,
Յիրուր գլուխ լալ ան ուզում...

Օվ ճշմարիտ խօսեց բարի,
Վերէն չարանալ ան ուզում...

Մինգնէ թէ մինն վէր ա ընկաման,
Ողջ ուրախանալ ան ուզում:

Ղուլ Արզունի, «Մեր անկն յիմարացել ան», էջ 92

Նոր Ջուղայի հայ աշուղները, հավատիրիմ մնալով աշուղության առաքելությանը, իրենց արվեստը ծառայեցրին իրենց ժողովրդի քաղաքակրթությանը: Ժողովրդական բանահյուսության ու գրավոր գրականության միջև գտնվող այս արվեստը՝ աշուղությունը, մոտ լինելով հասարակ աշխարհիկ մարդուն, կարողացավ թափանցել նրա կենցաղ ու բարեփոխել նրա հոգևոր ու մարդկային արժեհամակարգը:

Հետևաբար միջնադարյան գաղափարաբանության երկփեղկումը նպաստեց հասարակության՝ ինչպես հոգևոր, այնպես էլ կենցաղային շերտերում նոր չափանիշների ձևավորմանը, որը մարդուն փոխանցվեց ժամանակի մշակութային ակտիվի՝ աշուղական արվեստի ներկայացուցիչների միջոցով: Վերջիններիս խրատական տաղերում, թեև որոշակիորոն նշմարվում է միակերպություն, սակայն այն չի խանգարում խրատը տեղ հասցնելու, հասարակությանը դաստիարակելու և աշուղի «ուսուցչական» առաքելությունը լիարժեք իրականացնելու գործում:

Եզրակացություններ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

17-18-րդ դարերի պատմական, հասարակական պայմանները որոշում են Նոր Ջուղայեցի աշուղի առաքելությունը: Վտանգված էր պատերազմի, բռնագաղթի ու սովի հետևանքով անմարդկային պայմաններում հայտնված պարսկահայ ժողովրդի բարոյական ու ազգային նկարագիրը: Անհրաժեշտ էր վերանայել ու վերամշակել նրա կրոնական ու ազգային ավանդները: Այս շրջանում Նոր Ջուղայի աշուղները ստանձնում են ուսուցիչ-առաջնորդի դերը՝ իրենց երգի համար որպես թեմա ընտրելով **խրատը**՝ հետևելով տարածաշրջանի աշուղական տաղաչափական արվեստի օրինաչափություններին:

Նրանց երգի հիմքը հաճախ դառնում է կրոնն ու ժողովրդի հավատը, ուստի աշուղական խրատական երգի հիմնական շերտը կազմում են **կանոնական խրատները**, որտեղ ուսուցանվում են աստվածաշնչյան ուսմունքները: Հայ աշուղները երբեմն նույնիսկ որպես միջոց ընտրում են աղոթքը՝ ընդօրինակելով քրիստոնեական շարականներին հատուկ գղջումի ու ապաշխարության ընդունված ձևերը:

Մահվան վկայակոչումը քողազերծում է խրատը կրոնական կաղապարներից և տեղափոխում առարկայական ու կենցաղային հարթություն: Նոր Ջուղայի աշուղների **կենցաղային խրատները** ուսուցանում են կյանքի անցողիկության, խոնարհության, արդարամտության, ճշմարտախոսության, ընտանիքին, ընկերոջը, բարեկամին ու առհասարակ մարդուն նվիրվելու, կարիքավորին ձեռք մեկնելու բարոյակրթական դասեր՝ այդ հարցերում երբեմն վեր կանգնելով կրոնական ու ազգային նախապաշարմունքներից: Նրանց տաղերում մարդն սկսում է արժևորվել իր իմաստնությամբ, մարդկային ու բարոյական հատկանիշներով, ազգային նկարագրին հավատարիմ մնալու պատրաստակամությամբ:

Բառարան

Ասկ-ազգ
Բաս-վեճ
Բէդնամ-վատահամբավ
Գէրդար-արարք
Գօզալ-գեղեցկուհի, նազելի
Դոր-ինչպես, ուր
Դօվլաթ-հարստություն
Ձաղ-ապրանք, բան, առարկա
Իստակ-ուղիղ, մաքուր
Խտուր-հետ-միասին
Հախիրն-վերջը
Համիշայ-միշտ
Ղամիշ-եղեգ
Ղէյրիզ-բացի
Ղորդ-ճիշտ
Ճոթ-կտոր
Մալ-ունեցվածք
Մէջլիս-ժողով, խնջույք, հանդես
Մօհր-կնիք
Յիստակել-ուղղել
Նաքէս-նաքազ-անագնիվ
Չես խբար-տեղյակ չես
Սատաղ-մատաղ, զոհ
սօհբաթ- խոսք ու զրույց
Քդազ-զլխարկ
Քեամալ-կատարելություն
Ֆահմ ու հուշ-հասկացողություն

Погосян Сосе Б., Осмысленно-поучительные песни в ашугских школах Нор-Джуга. Целью данной статьи является изучение осмысленно-поучительной песни в персидско-армянских ашугских школах Нор-Джуга.

Исторические и общественные условия 17-18-ых веков определяют миссию ашуга норджугинца. Под угрозой был моральный и национальный облик персидско-армянского народа, оказавшегося в бесчеловечных условиях в результате войны, депортации и голода. Было необходимо пересмотреть и переработать его религиозные и национальные традиционные вложения. В этот период ашуги Нор-Джуга принимают на себя роль учителя-лидера, выбирая в качестве темы для своих песен **наставление**, а также следуя закономерностям творчества ашугского стиховложения региона.

Основой для их песен чаще всего становятся религия и народная вера и поэтому основную часть ашугской тривиальной песни составляют **канонические наставления**, в которых обучаются библейским учениям. Иногда армянские ашуги в качестве средства выбирают даже молитву, подражая основным видам раскаяния и покаяния, присущих христианским шараканам.

Ссылка на смерть разоблачает наставление из религиозных рамок, перенося его на предметное и бытовое пространство. **Бытовые наставления** ашугов Нор-Джуга обучают морально-этическим урокам о скоротечности жизни, смирении, праведности, правдивости, преданности семье, другу, доброжелателю и вообще человеку в целом, а также помогая нуждающимся, изредка обходя в этих вопросах религиозные и национальные предрассудки. В их песнях человек начинает оцени-

ваться своей мудростью, человеческими и моральными качествами, изъявляя готовность оставаться верным национальному облику.

Ключевые слова: ашуг, ашугская литература, ашугское искусство стихосложения, осмысленно-поучительные песни, каноническое наставление, бытовое наставление, христианское мировоззрение, библейские мотивы, раздвоение средневековой идеологии, душа и тело, духовный и мирской, раскаяние, покаяние, ссылка на смерть.

Sose B. Poghosyan, Philosophical-instructional Tunes in the School of Ashugh's (troubadours) of Nor Jugha. The aim of this paper is to explore the instructional tunes in the Armenian-Iranian ashugh's school of New Jugha.

The historical, social circumstances of the 17th and 18th centuries determined the mission of the ashugh from New Jugha. The moral and national character of the Armenian-Iranian community was in danger as a result of war, exile and famine. It was necessary to review and refine its religious and national traditions. In this period, the ashughs of New Jugha assumed the role of leader-teachers adopting **instruction** as a theme and following the rules of regional ashugh's art. Their basis was often the religion and faith of people, hence the majority of instructional songs are **religious instructions** where biblical canons are taught. Armenian ashughs sometimes even adopted prayer as a means adopting the common forms of regret and repentance typical of Armenian religious chants.

The reference to death reveals the instruction from under religious formulas and transfers it to material and day-to-day dimension. The **day-to-day instructions** of the ashughs of New Jugha teach the transience of life, modesty, fairness, straightforwardness, dedication to the family, friend, relative and in general dedication to man, moral instructions to give a hand to the needy overcoming in that matter the religious and national prejudices. In their tunes, one acquires value through wisdom, human and moral qualities, willingness to remain loyal to the national character.

Key words: ashugh, troubadour's literature, art of ashugh's poetry, philosophical-instructional tunes, religious instructions, day-to-day instructions, Christian worldview, biblical motives, the bifurcation of medieval ideology, body and soul, spiritual and secular, regret, repentance, reference to death.